

## Տավուշի մարզի բնակչության ժողովրդագրական իրավիճակը և բնական աճի միտումները

*Պողոսյան Վլադիմիր*

*Հանգուցային բառեր. հասարակական ինստիտուտներ, ժողովրդագրական ռեգրեսիա, հետազոտության մեթոդաբանություն, վերարտադրող սերունդ, բնակչության աճ, տեղային խնդիրներ, բնական շարժ*

### Նախաբան

Ժողովրդագրական գործընթացները ժամանակակից սոցիալ-տնտեսական փոփոխությունների և վերափոխումների կարևորագույն բնութագրիչներից են: Հանդիսանալով հասարակական կյանքի, աշխարհաքաղաքական, քաղաքական, տնտեսական, սոցիալական, ժողովրդագրական, բնապահպանական և բազմաթիվ այլ արտաքին և ներքին գործընթացների արդյունք և պատճառ՝ այն որոշարկվում է բազմաբնույթ գործոնների փոխազդեցությամբ: Մարդկային հասարակության զարգացման ժամանակակից միտումների համատեքստում ոչ միայն կարևոր, այլև անհրաժեշտ է ոչ միայն կենտրոնանալ ժողովրդագրական ընթացող փոփոխությունների գնահատման, ներկա միտումների վրա, այլև գնահատել և կանխատեսել առաջիկա ռիսկերն ու հնարավորությունները:

Հայաստանի Հանրապետության ժամանակակից ժողովրդագրական միտումների երկարաժամկետ հետևանքները 21-րդ դարի երրորդ և հաջորդ տասնամյակում ոչ միայն կարող են հանգեցնել ծնելիության նվազմանը, բնակչության ծերացմանը, այլև հասարակական (սոցիոնորմատիվ) ինստիտուտների լարվածության հիմքերի ստեղծմանը: Ըստ ուսումնասիրողների՝ ժողովրդագրական գործընթացների արդի միտումները ՀՀ ազգային անվտանգության իրական մարտահրավերների շարքում են [1, 148]: Պետք է նշել, որ հանրապետական ցուցանիշների իրավիճակը ավելի կայուն է՝ ի հակադրություն տեղային մարզային ցուցանիշների: Այս առումով Տավուշի մարզի ժողովրդագրական գործընթացների արդի միտումների համապատկերում դիտարկելի են դառնում առկա բոլոր տեսակի բացասական և դրական միտումների ազդեցությունները:

Սույն հոդվածի նպատակն է համապարփակ ուսումնասիրության ենթարկել Տավուշի մարզի բնակչության բնական աճի ներկա վիճակն ու միտումները, և այս նպատակի իրագործման ճանապարհին խնդրառել Տավուշի մարզի բնակչության բնական աճի ներկա ցուցանիշները,

դիտարկել բնակչության տարիքային կազմի փոփոխության մոտակա և հեռակա ազդեցությունը, կարևորել տեղային խնդիրների վերհանման և գիտական ուսումնասիրությունների անհրաժեշտությունը՝ կիրարկելով ժողովրդագրության գիտաչափական տարաբնույթ սկզբունքները:

Կատարված հետազոտությունը հնարավորություն է տալիս ձևակերպել և հիմնավորել հեղինակի կողմից առաջ քաշված և գիտական նորույթ պարունակող վերլուծությունները, որոնք վերաբերում են Տավուշի մարզի ժողովրդագրական իրավիճակին՝ միայն բնական աճի միտումների համատեքստում:

Մույն հոդվածում կիրառվել են արդի ժողովրդագրության մեջ կիրառվող տեղային ուսումնասիրության միտումները՝ միայն Տավուշի մարզի առկա ցուցանիշները: Աղյուսակներում կիրառվել է պատմահամեմատական մեթոդը՝ նախորդ տարիների ցուցանիշների համեմատության ենթախորքով:

### **Տավուշի մարզի բնակչության թվաքանակի և կառուցվածքի դինամիկան**

Ժողովրդագրական գործընթացների փոփոխությունները մի կողմից ընդհանուր սոցիալ-տնտեսական զարգացման և հասարակության սոցիալ-քաղաքական վիճակի արդյունք են, մյուս կողմից դրանք ազդում են հասարակության զարգացման հեռանկարների վրա՝ կա՛մ խթանելով հասարակության առաջանցիկ զարգացումը, կա՛մ խոչընդոտելով այն: Այս համատեքստում Հայաստանի Հանրապետության և նրա վարչատարածքային միավորների ժողովրդագրական անվտանգության հիմնախնդիրն առաջնային և կենսական է:

Աշխարհի բնակչությունը, որը 2020 թվականին կազմում էր շուրջ 7,8 միլիարդ մարդ, արագորեն աճում է, և ակնկալվում է, որ առաջիկա տասնամյակներում կշարունակի աճել, թեև աստիճանաբար ավելի դանդաղ տեմպերով: Միավորված ազգերի կազմակերպության կանխատեսումները ցույց են տալիս, որ 21-րդ դարի վերջում գլոբալ բնակչության թիվը կարող է հասնել գրեթե 11 միլիարդի [12]: Ակնկալվում է, որ գլոբալ բնակչության չափը կկայունանա մոտ 2100 թվականին՝ վերջ դնելով արագ աճի ներկայիս դարաշրջանին, որը սկսվել է մոտ 1800 թվականին որոշ տարածաշրջաններում և 20-րդ դարի կեսերին համաշխարհային մասշտաբով: ՄԱԿ տնտեսական և սոցիալական գործերի վարչության բնակչության բաժանմունքը հրատարակել է «World Population Prospects 2019» զեկույցը, որի համաձայն՝ ՀՀ մշտական բնակչությունը 2050-ին նվազելու է՝ հասնելով 2, 816 միլիոնի, իսկ 2100-ին՝ 2,039 միլիոնի [13]: Բնականա-

բար, այս հետազոտություններն արդյունք են մի շարք ցուցանիշների համադրության և կանխատեսելիության որոշակի գործակիցների, որտեղ տեղային բնական և արհեստական ռիսկերը (պատերազմներ, սոցիոինստիտուտների ճգնաժամ և առողջապահական) գնահատված են այսօրվա կտրվածքով, և այս հետազոտության ենթախորքին կանխատեսելի է, որ համամասնորեն Տավուշի մարզի բնակչությունը 2050-ին նկատելիորեն կնվազի՝ հասնելով մոտ 113-114 հազար բնակչի:

Համաձայն ՀՀ ԱՎԾ վիճակագրական տվյալների՝ ՀՀ մշտական բնակչության թվաքանակը 2022 թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է 2,961.4 միլիոն [11], որից Տավուշի մարզի բնակչությունը համամասնորեն ներկայացնում է 119.7 հազար [11] կամ հանրապետության բնակչության 4,04 տոկոսը (աղյուսակ 1):

*Աղյուսակ 1*

*ՀՀ բնակչությունը՝ ըստ մարզերի, 2015-2022 թթ. -ի, տարեսկիզբ, հազ. մարդ*

ՄԱՐԶ	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022
<b>Հայաստան</b>	<b>3010.6</b>	<b>2998.6</b>	<b>2986.1</b>	<b>2972.7</b>	<b>2965.3</b>	<b>2959.7</b>	<b>2963.3</b>	<b>2961.4</b>
Արագածոտն	131.3	129.8	128.5	127.1	125.4	124.7	124.5	124.6
Արարատ	260.1	258.9	258.4	257.8	256.7	256.6	256.6	256.6
Արմավիր	267.0	266.6	265.8	264.6	263.9	263.8	264.0	264.4
Գեղարքունիք	233.0	231.8	230.7	229.7	228.3	227.7	227.3	227.8
Լոռի	228.0	225.0	221.1	217.4	215.5	213.3	212.6	211.7
Կոտայք	255.0	253.9	252.8	251.6	251.6	250.9	251.2	251.1
Շիրակ	246.4	243.2	239.3	235.4	233.3	231.4	231.0	230.4
Սյունիք	140.2	139.4	138.9	138.4	137.6	137.3	135.8	134.7
Վայոց ձոր	51.4	50.8	50.3	49.6	49.0	48.5	48.1	47.6
<b>Տավուշ</b>	<b>126.7</b>	<b>125.5</b>	<b>124.5</b>	<b>123.5</b>	<b>122.2</b>	<b>121.5</b>	<b>120.5</b>	<b>119.7</b>

Մեր զեկույցում կկենտրոնանանք Տավուշի մարզի վրա. մի տարածաշրջան, որը ցույց է տալիս ժողովրդագրական զարգացման բոլոր հնարավոր ցուցանիշների չափազանց անբարենպաստ դինամիկա, որն ավելի ճիշտ կարելի է անվանել *ժողովրդագրական ռեգրեսիա*: Նախ պետք է նշել, որ 1991 թվականից ի վեր մարզի բնակչության թիվը անշեղորեն նվազում է՝ երբեք չհասնելով դրական արժեքների: Այս ժամանակահատվածում մարզային ժողովրդագրական ցուցանիշը 2006 թվականի 134,4 հազարից [9] նվազել է՝ 2022 թվականի հունվարին հասնելով 119,7

հազարի [11]: Մարզի բնակչության ընդհանուր կորուստը վերջին տարիներին գերազանցել է 14,7 հազարը: Ակնհայտորեն, այս իրավիճակը չի կարող բացատրվել միայն բնակչության կառուցվածքի, միգրացիոն գործընթացների և ծնելիության ցածր մակարդակի առանձնահատկություններով, քանի որ այս միտումները բնորոշ են նաև այլ շրջանների մեծամասնությանը: Պետք է ընդունել, որ ներկայիս իրավիճակը հիմնված է վարքագծային գործոնների վրա, որոնց թվում առաջատար դերը պատկանում է կենցաղին, ընտանեկան ինստիտուտի կազմաքանդմանը, համաշխարհայնացման գաղափարների և հասարակության եվրոպականացման այլազան ձգտումներին և պատկերացումներին<sup>1</sup>:

Ընդհանուր համապատկերում՝ Հայաստանի Հանրապետությունում գոյություն ունեցող ժողովրդագրական ճգնաժամում հստակորեն առանձնանում են երկու շերտ՝ բնակչության բնական շարժի (ծնելիության և մահացածության հարաբերակցություն) և բնակչության մեխանիկական շարժի (ներգաղթի ու արտագաղթի հարաբերակցություն) խիստ անցանկալի պատկեր և միտումներ [2, 206]: Իսկ պատճառների մեջ նույնպես կարելի է առանձնացնել երկու խումբ՝ ներքին և արտաքին: Եվ բնական շարժընթացի, և միգրացիոն հոսքերի ազդեցությունը տեղային՝ մարզային մակարդակով հստակ նկատելի է: Ըստ վիճակագրական տվյալների՝ վերջին հինգ տարիների կտրվածքով Տավուշի մարզի ծնելիության տարեկան միջին գործակիցը 11.2-ից նվազել է 9.7-ի, իսկ մահացության գործակիցը՝ 11.2-ից աճել է՝ հասնելով 13.2-ի:

Պետք է նաև շեշտել, որ պտղաբերության ընդհանուր գործակցի առանձնահատկությունը [1, 134-135] կապված է տարբեր տարիքային խմբերի քանակի հետ, որոնք տարբեր ժամանակներում ընդգրկված են բնակչության վերարտադրության գործընթացում և նպաստում են դրա քանակի ավելացմանը: Տավուշի մարզի ծնելիության համեմատաբար ցածր ցուցանիշները պայմանավորված են մարզի բնակչության տարիքային կառուցվածքի առանձնահատկություններով. ամենաբազմամարդ (կանանց) խմբերը (35-39 տարեկան՝ համապատասխանաբար 8.2 %, 30-34 տարեկան՝ համապատասխանաբար 7.9 %, կամ ընդհանուրի 16.1-16.5 %-ը) գործնականում իրացրել է իր վերարտադրողական ներուժը՝ հիմնական ներդրումն ունենալով մարզի բնակչության ընդհանուր թվի ձևավորման գործում: Նրան հաջորդող խումբը (25-29 տարեկան) քանակապես փոքր է, իսկ 20-24 տարեկանների խումբը՝ առաջիկա տարիներին

---

<sup>1</sup> Այս համատեքստում համադրելի է նաև այն միտքը, որ հասարակության ներսում ավելի գերակա է ԵՄ-ի ազդեցությունը, քան ՄԵՆԹ վճռականությունը:

վերարտադրողական վարքագծի հիմնական դերակատարները, վերջիններից պակաս է ևս 318-ով, պարզ ասած՝ ծննդաբերող չկա, ինչը որոշակիորեն արժեզրկում է ծնելիությունը խթանելու առաջարկները: Այս ցավալի պատկերի առկայությունն օրակարգային է դարձնում հանրապետական և մարզային գիտակարգային հետազոտությունների անցկացումը, որը թույլ կտա որոշարկել խնդիրների և ռիսկերի այն շրջանակը, որը արգելակում է Տավուշի մարզի բնական վերատադրությանը, զանազանելու ոչ միայն անվտանգային, տնտեսական, այլև սոցիալ-հոգեբանական հիմնախնդիրները, առանձնացնելու մոտիվացիոն այն շարժառիթները, որոնց խթանմամբ հնարավոր կլինի որոշակիորեն բարելավել առկա ցուցանիշները: Այդպիսի հետազոտության մեթոդաբանական հիմք կարող է հանդիսանալ «Երեխաների արժեքը» հայեցակարգը [5, 70–79; 7, 464], որի գիտաչափական մեթոդներով հնարավոր է առանձնացնել և թիրախային լուծել տարբեր տարիքային կազմերի առանձնահատկությունները, վերարտադրության շուրջ հասարակության տարբեր տարիքային կազմերի ներկայացուցիչների մոտեցումները: Այս հայեցակարգը պարառում է երեխա ունենալու երեք հիմնական խմբերի դրդապատճառների վերլուծություն: Առաջինը ուտիլիտար-տնտեսական ասպեկտն է, որը հատկապես բնորոշ է զարգացող երկրներին, որտեղ ընտանիքի յուրաքանչյուր նոր անդամ տնտեսական բարելավման, աշխատուժի մեծացման դերակատարմամբ է առանձնացվում, և համալրման մոտիվը ընտանիքի կենսաապահովման պայմանների բարելավումն է (այս ասպեկտով կարելի է բացատրել Տավուշի մարզի խորհրդային ժամանակաշրջանի ժողովրդագրական աճի շարժառիթները): «Երեխաների արժեք» հայեցակարգի երկրորդ ասպեկտը սոցիալ-հոգեբանական է, որի մոտիվների այս խումբը բնորոշ է զարգացած երկրներին, որտեղ երեխաներ ունենալու հիմնական դրդապատճառը դրական հուզական փորձառությունների ցանկությունն է, որն ուղեկցում է երեխայի ծննդին և դաստիարակությանը [6, 395], ինչն առավել բնորոշ է այսօրվա Տավուշի մարզի քաղաքային բնակչությանը: Շարժառիթների երրորդ խումբը (երեխաների արժեքի) դիտարկվում է խորհրդանշական մոտեցմամբ, և երեխայի առկայությունը վերածվում է «լիարժեք» ընտանիքի հատկանիշի, դառնում ամուսնության «նորամածության» հիմնական ցուցիչ՝ արժեզրկելով ամուսնության ինստիտուտի արժեքը: Հաստատապես, այս ասպեկտը հայաստանյան՝ ի մասնավորի տավուշյան բնակչության վերարտադրողական վարքագծում գերակայություն չունի, և կարելի է այս ենթախորքով չդիտարկել հիմնախնդիրը:

Հարկ է նշել, որ հայաստանյան ծնելիության էքստրապոլյացիոն միտումները բնորոշ են նաև զարգացած երկրներին: Հաջորդ բաղադրիչը, որն ուղղակիորեն ազդում է բնակչության բնական շարժի վրա, մահացության գործակիցն է, որի ցուցանիշները Հայաստանում վերջին մեկ-երկու տարիների ընթացքում բարձր մակարդակի վրա են, և ըստ հետզոտությունների՝ հետագայում այս տենդենցը պահպանվելու է [1, 141]: 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ 2016-ի համամեմատ Տավուշի մարզի բնական հավելաճի գործակիցը նվազել է՝ 3.8-ից հասնելով -4-ի, ինչը ահագնացնող ցուցանիշ է, ինչի արդյունքում մահացությունը 424-ով գերազանցել է ծնվածներին թվին: 2021-ի դրությամբ մահացությունը ևս գերազանցում է ծնելիությանը, և 1284 ծնվածին բաժին է հասնում 1633 մահացած, կամ մահացությունը գերազանցում է 349-ով: 2021-ի Տավուշի մարզի բնական համելաճի գործակիցը կազմում է -2,9, և այս առումով նախորդ տարվա բացասական ցուցանիշը բարելավվել է 1,1-ով [3, 157] (աղյուսակ 2, 3):

**Աղյուսակ 2**

**Բնակչության բնական շարժի հիմնական ցուցանիշները**

*1 000 բնակչի հաշվով*

	Ծնվածներ			Մահացածներ			Բնական աճ		
	2020	2021	2022*	2020	2021	2022*	2020	2021	2022*
Հայաստանի Հանրապետության բնակչություն	10.3	12.4	11.2	12.2	11.7	10	0.1	07	1.2
Տավուշի մարզ	9.7	10.7	11.4	13.2	13.6	12.7	-3.5	-2.9	-1.3
<i>*ՀՀ բնակչության բնական շարժի հիմնական ցուցանիշներն ըստ ՀՀ մարզերի և ք.Երևանի, 2022թ. հունվար-հունիս [4, 160]</i>									

**Աղյուսակ 3**

**Բնակչության բնական շարժի հիմնական ցուցանիշները**

	Ծնվածներ			Մահացածներ			Բնական աճ		
	2020	2021	2022*	2020	2021	2022	2020	2021	2022
Հայաստանի Հանրապետության բնակչություն	36 353	36585	16511	36 170	34658	14679	183	1927	1832
Տավուշի մարզ	1 175	1284	676	1 599	1633	754	-424	-349	-78
<i>*ՀՀ բնակչության բնական շարժի հիմնական ցուցանիշներն ըստ ՀՀ մարզերի և ք.Երևանի, 2022թ. հունվար-հունիս [4, 160]</i>									

Ինչպես երևում է ներկայացված տվյալներից, Տավուշի մարզի ծնելիության մակարդակը չի հասել հանրապետական միջինին, մինչդեռ

մարզը ժողովրդագրական փոփոխությունների ընդհանուր միտում է ունեցել, քանի որ ցուցանիշների տատանումները եղել են բավականին համաժամանակյա:

### **Եզրակացություն**

1. Տավուշի մարզի բնակչության բնական աճի առկա վիճակը և հեռանկարում հնարավորությունները ցույց են տալիս, որ 2020, 2021 և 2022 թվականներին բնակչության աճը ոչ միայն ունի նվազման միտում, այլև մահացության հետ համեմատության դեպքում տալիս է բացասական ցուցանիշներ: Իհարկե վերջին 5 ամսվա տվյալներով ծնելիություն/մահացություն ցուցանիշը ունի բարելավման միտում, սակայն պահպանելով բացասականությունը:

2. Վերջին տարիներին փոխվել է բնակչության տարիքային կազմը, և դոմինանտում է 30-40 տարեկանների խումբը, որը, ըստ էության, վերարտադրողական հիմնական խնդիրը իրացրել է, իսկ նրան փոխարինող վերարտադրող սերունդը քանակապես նվազ է, և ապագա հեռանկարում ծնունդների աճ կարող է լինել պետական քաղաքականության, երկարաժամկետ սոցիալական օժանդակության հիման վրա:

3. Պետք է նշել, որ յուրաքանչյուր մարզ ունի իրեն հատուկ ժողովրդագրական առանձնահատկությունները, և տեղային ուսումնասիրություններն ավելի համընդգրկուն պատկեր կարող են ապահովել: Տավուշի մարզում որոշակի փոփոխությունների է ենթարկվել ընտանիքի ինստիտուտը, և հետազոտությունները հնարավորություն կտան տեղային և հանրապետական իշխանությունների գործուն և թիրախային քայլեր իրականացնել այս ուղղությամբ: Տավուշի մարզի բնակչության բնական շարժընթացի հետազոտության մեթոդաբանական հիմք կարող է հանդիսանալ «Երեխաների արժեքը» հայեցակարգը:

### **Գրականություն**

1. Մալխասյան Մ., Խաչիկյան Ա., Մալխասյան քին. Ա., Հայաստանի Հանրապետության բնակչության բնական աճը ժողովրդագրական անցման արդի փուլի համատեքստում. միտումներ և մարտահրավերներ | «Հայագիտության հարցեր», 2021, հմ 1, էջ 131-154:
2. Ներսիսյան Ա. Հ., ՀՀ-ը սպառնացող ժողովրդագրական աղետ: Մարտահրավերներ, հեռանկարներ, Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան, Գիտական տեղեկագիր, 2019, հմ 2, էջ 204-216:

3. «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թվականի հունվար-դեկտեմբերին», Երևան, 2022, 157 էջ:
4. «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2022 թվականի հունվար-հուլիսին», Երևան, 2022, 160 էջ:
5. Курамшев А.В., Кутявина Е.Е., Судьин С.А. Бабушка в системе внутрисемейных отношений: социологический анализ // Женщина в российском обществе. – 2017. – № 3. – С. 70–79.
6. Саралиева З.Х., Балабанов С.С. Дети как жизненная ценность россиян // Россия реформирующаяся. 2009. № 8. С. 395.
7. Kagitcibasi C. Family, self, and human development across cultures: Theory and applications. – Hillsdale, N.Y.: Erlbaum, 2007. – 464 p.
8. «ՀՀ Տավուշի մարզը թվերով 2021. վիճակագրական ժողովածու», <https://armstat.am/file/doc/99527768.pdf> (Հղված է 16. 08. 2022)
9. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզը թվերով - 2009, <https://armstat.am/file/doc/99458453.pdf> (Հղված է 16. 08. 2022)
10. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզը թվերով – 2021, <https://armstat.am/file/doc/99527768.pdf> (Հղված է 16. 08. 2022)
11. Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության թվաքանակը 2022 թ.-ի հունվարի 1-ի դրությամբ, [https://www.armstat.am/file/article/population\\_01\\_22.pdf](https://www.armstat.am/file/article/population_01_22.pdf) (Հղված է 05. 10. 2022)
12. United Nations Department of Economic and Social Affairs, Population Division (2021). Global Population Growth and Sustainable Development. [Electronic resource] - Access mode: URL: [https://www.un.org/development/desa/pd/sites/www.un.org.development.desa.pd/files/undesapd\\_2022\\_global\\_population\\_growth.pdf](https://www.un.org/development/desa/pd/sites/www.un.org.development.desa.pd/files/undesapd_2022_global_population_growth.pdf) (accessed 16. 08. 2022)
13. United Nations, Department of Economic and Social Affairs, Population Division (2019). World Population Prospects 2019, Volume II: Demographic Profiles, [Electronic resource] - Access mode: URL: [https://population.un.org/wpp/Publications/Files/WPP2019\\_Volume-II-Demographic-Profiles.pdf](https://population.un.org/wpp/Publications/Files/WPP2019_Volume-II-Demographic-Profiles.pdf) (accessed 01. 05. 2022)



## Демографическая ситуация и естественный прирост населения Тавушской области

*Погосян Владимир*

### Резюме

*Ключевые слова: социальные институты, демографическая регрессия, методологические исследования, воспроизводящее поколение, рост населения, локальные проблемы, естественное движение*

Демографические процессы являются одной из важнейших характеристик современных социально-экономических изменений и преобразований. Являясь результатом и причиной общественной жизни, геополитических, политических, экономических, социальных, демографических, экологических и многих других внешних и внутренних процессов, она определяется взаимодействием различных факторов. Долгосрочные последствия современных демографических тенденций РА в третьем и следующем десятилетии 21 века могут не только привести к снижению рождаемости, старению населения, но и создать почву для напряженности в общественных (социо-нормативных) институтах.

Целью данной статьи является всестороннее изучение текущего состояния и тенденций естественного роста населения Тавушской области. На пути реализации цели мы поставили задачу изучить нынешние показатели естественного роста населения Тавушской области, рассмотреть ближайшее и отдаленное влияние изменения возрастного состава населения, выделить необходимость выявления местных проблем и научных исследований, применяя различные научно-метрические принципы демографии.

Отдел народонаселения Департамента по экономическим и социальным вопросам ООН опубликовал отчет «World Population Prospects 2019», согласно которому постоянное население РА сократится до 2.816 млн. в 2050 г. и до 2.039 млн. в 2100 году. Естественно, эти исследования являются результатом сочетания ряда показателей и определенных коэффициентов предсказуемости, где оцениваются локальные природные и искусственные риски (войны, кризис социоинститутов и здравоохранения), и предсказуемо, что население Тавушской области к 2050 году уменьшится, достигнув 114 330 жителей, или каждый год население области будет уменьшаться на 213 жителей.

Текущее состояние естественного прироста населения Тавушской области и возможности в будущем показывают, что прирост населения в

2020, 2021 и 2022 годах не только имеет тенденцию к снижению, но и показывает отрицательные показатели по сравнению со смертностью. Конечно, по данным последних 5 месяцев рождаемость/смертность имеет тенденцию к улучшению, при этом сохраняя негативность.

В последние годы возрастной состав населения изменился и доминирует 30-40-летняя группа, которая, по сути, выполнила основную репродуктивную задачу, тогда как сменяющее ее репродуктивное поколение количественно меньше, и в перспективе, может быть увеличение рождаемости на основе государственной политики и долгосрочной социальной поддержки.

## Demographic Situation of the Tavush Region Population and Natural Growth Trends

*Poghosyan Vladimir*

### Summary

**Key words:** *social institutions, demographic regression, methodological research, reproducing generation, population growth, local problems, natural movement*

Demographic processes are one of the most important characteristics of modern socio-economic changes and transformations. Being the result and cause of public life, geopolitical, political, economic, social, demographic, environmental and many other external and internal processes, it is determined by the interaction of various factors. The long-term consequences of current demographic trends in the Republic of Armenia in the third and next decade of the 21<sup>st</sup> century can not only lead to a decrease in the birth rate, the aging of the population, but also create ground for tension in public (socio-normative) institutions.

The purpose of this article is a comprehensive study of the current state and trends in the natural growth of the Tavush region population. On the way to achieving the goal, we set the task of studying the current indicators of the natural growth of the Tavush region population, considering the immediate and long-term impact of changes in the age composition of the population, highlighting the need to identify local problems and scientific research using various scientific and metric principles of demography.

The Population Division of the UN Department of Economic and Social Affairs published the «World Population Prospects 2019» report, according to

which the permanent population of the Republic of Armenia will decrease to 2,816 million in 2050 and to 2,039 million in 2100. Naturally, these studies are the result of a combination of numerous indicators and certain predictability coefficients, where local natural and artificial risks (wars, crisis of social institutions and healthcare) are assessed in today's conditions. It is predicted that the population of the Tavush region will decrease by 2050, reaching 114,330 inhabitants, or every year the population of the region will decrease for 213 inhabitants.

The current state of natural population growth in the Tavush region and its future predictions show that population growth in 2020, 2021 and 2022 not only tends to decrease, but also shows negative indicators compared to mortality. Of course, according to the data of the last 5 months, the birth / death rate tends to improve, while maintaining the negative.

In recent years, the age range of the population has changed and the 30-40-year-old group dominates, which, in fact, completed the main reproductive task, while the reproductive generation that replaces it is quantitatively smaller and in future, there might be an increase in birth rate based on state policy and long-term social support.

Ներկայացվել է 27.09.2022 թ.

Գրախոսվել է 18.10.2022 թ.

Ընդունվել է տպագրության 25.11.2022 թ.